

## ԿՐՕՆԱԿԱՆ

## ԵՂԻՈՒ ՄԸԳՈՐԷԻ ՏԵՍԻԼԸ.

Ասէ Տէր ցեղիա. Ելցես դու վաղիւ և կացցես ի լերին անդ առաջի Տհառն և ահա Տէր անցցէ, և Հողմ մեծ ուժգին՝ որ զլերինս քակիցէ և զվէմն խորտակիցէ առաջի Տեառն, և ոչ ի Հողմն Տէր, և յետ Հողմոյն շարժումն, և ոչ ի շարժմանն Տէր. և յետ շարժման Հուր, և ոչ ի Հուրն Տէր. և յետ Հրոյն ձայն մեղմոյ օդոյ (և աստ է Տէր): Եւ եղև իբրև լուաւ Եղիա՝ ծածկեաց զերեսս իւր մաշկեկաւն, և ել: (Երբորդ Թագ. ԺԹ. 11—13):

Ամենագորեղ ապացոյցներից մէկը Ս. Գրոց ցաւալի տգիտութեան, որ տիրապետում է մեր Հայրենիքում, այն թեթեւամտութիւնն է, որով դատում են Հին Ուխտի Աստուծոյ մասին: Ես այս ասում եմ ոչ թէ միայն ամեն ինչ դատապարտող այն քննադատութեան մասին, որ անցեալ դարից սկսած յարձակում է Աստուածաշնչում նկարագրուած ամենահրաշալի դէպքերի վերայ և որ առանց այլատելու նոցա Հոգևոր նշանակութիւնը հասկանալու, գտնում է նոցա մէջ առիթ ստոր ծաղրածութեանց համար, այլ և այն գիտութեան մասին, որ հաւատացնում է, թէ ինքն աւելի ծանրութեամբ վերաբերում է գործին—և ինձ զարմացնում է այն, թէ որպիսի նախապաշարմունքներով նա զեկավարուում է: Այսպէս այն կատարեալ ստուգութիւնն, այն սուրբ մտերմութիւնն, որով Ս. Գիրքը պատմում է, նկարագրում է թուլութիւնքն և անկումն Աբրահամի, Յակոբի, Մովսէսի, Դաւթի՝ Հրէից ազգի այս սիւների, որոնց ազգային հպարտութիւնն, եթէ Ս. գիրքը սորա գործը լինէր, յայտնի բան է այդպէս չէր ներկայացնիլ մեզ, նոյնպէս և բոլոր Ս. Գրոց յատուկ իւրատեսակ եղանակը պատմութեան առիթ են տալիս առանց տատանման այն բոլոր յանցանքների և գանցա-

ութեանց համար պատասխանատու համարելու Աստուծոն իրան, որին այդ մարդիկ երկրպագում էին, առանց մտածելու, թէ արդեօք հաւանութիւն գտնում էին այդ վարմունքները նրանից, առանց ուշադրութիւն դարձնելու, որ Նա՛ Աստուած դատապարտած է նրանց և որ բոլոր յանցաւորները ենթարկուած են փորձութեանց և ասպաշխարհաց ծանր և վշտալի խրատներին: Կամ որովհետև Եհովան մարդկութեան վերաբերմամբ ունեցած իւր նախախնամութեան ճանապարհներում իբրև գործիք գործ է դնում Իսրայելացւոց ազգին, ենթարկում է սրան աստուածպետական վարչութեան, ուրեմն և օրէնքներին, որոնք, ինչպէս և ամեն քաղաքական և պետական օրէնքները, պէտք է հաստատուին զօրութեամբ, այս պատճառով Եհովայի մէջ կամենում են տեսնել միայն պատժող — վրէժինդիր Աստուած, նրան են վերաբերում այն նեղ շրջահայեցողութիւնն, այն ատելութիւնն, այն յանցաւոր գործերն, որ Իսրայելը խառնում էր այն գործի կատարելուն հետ, որ նորա վերայ դրած էր Նախախնամութիւնն և մոռանում են, որ մինչև անգամ այն ժամանակ, աստուածպետութեան հովանաւորութեան ներքոյ, նրան յատուկ յաւիտեական ճշմարտութիւնը, սէրն և ողորմածութիւնը, պայծառապէս երևում են Հին Ուխտի մէջ հազարաւոր տեղերում, որ նորա մէջ երբեմն երևում է կատարեալ անտարանական հեղովութիւն և սէր և որ լսելով մարգարէների շատ խօսքերը մարդ կարծում է թէ նստած է Յիսուսի Քրիստոսի ոտների մօտ: Ի՛նչ, մի՞թէ այն պատճառով, որ Իսրայելի այդ Աստուածը յայտնելով Իրան իւր Որդւով ծաւալեց մեր վերայ Իւր լոյսն բոլոր լուութեամբ, մենք կարհամարհենք այն Աստուածային լոյսն, որով լուսաւորում է Հին Ուխտի մէջ: Կէսօրի լոյսը արդեօք կարող կլինի ստիպել մեզ, որ մոռանանք արշալոյսի հիանալի գեղեցկութիւնը: Ո՛չ, եղբարք, մենք և այն խորհրդաւոր ստուերի մէջ, որով գեռ Նա իրան շրջապատում է, երկրպագում ենք Արաւհամի, Մովսէսի, Եղիայի և Դաւթի Աստծուն, որովհետև Նա մեզ համար է և միշտ կլինի այն Աստուածն, որին յայտնեց և անտարանեց մեզ Յիսուս Քրիստոսը:

Իմ յայտնած միտքը ներշնչած է ինձ այն պատմութիւնն, որից

առած եմ վերեն առաջ բերած իմ բնաբանս և ես պնդում եմ, որ զննելով նրան և հասկանալով նորա իսկական միտքը, դուք էլ ինձ նման կտեսնէք նորա մէջ հիանալի ճաշակն՝ այն անտարանական յայտնութեան, որով Աստուած մեզ տուեց ճանաչելու Իրան այնպիսի, որպիսին նա է:

Այս պատմութիւնն առած է Եղիա մարգարէի կենսագրութիւնից: Եղիան Աստուածպետութեան ժամանակի ճշմարտութեան պաշտպանների իսկական պատկերն է:

Ընդհանուր կուսապաշտութեան ժամանակ նա բամբոջապէս լի է Աստուծոյ փառաց գաղափարներով, նա վառուում է այս սիրով, նա այլ սէր չէ ճանաչում, նա կամենում է վերականգնել Եհովայի թագաւորութիւնն և այս գործողութեան մէջ նրան ոչինչ չէ կանգնեցնում, մարմնոյ և արեան ոչ մի կապանք: Ինչպէս Յովհաննէս Մկրտիչն, որ իննը դարից յետ կլինի նորա անուան և գործի յաջորդը, նա էլ է ոգեպէս պաշտում, զարգանում է անապատում:

Նա դուրս է գալիս այստեղից, որպէս զի երևի Աքաբի պալատում, որպէս զի այստեղ յայտնէ Աստուծոյ բարկութիւնն, և այս ժամանակ նորա ձայնը որոտում է, Աստուծոյ դատաստանը հետևում է նորա խօսքին, որ այնքան զօրեղ է և կարող, որ ժողովուրդն ազահուութեամբ լսում է նրան, նա հրաւեր է կարդում բահաղի քուրմերին, մերկացնում է նոցա խաբեբայութիւնն և կոտորել է տալիս նրանց առանց ինայելու: Եւ ահա այս ժամանակ նա կարող էր կարծել, որ հասել է Տիրոջ թագաւորութիւնն, որովհետև ժողովուրդը սկսաւ կոչել նորա անունն և Կարմելում ամբողջ օրը շարունակ լսում էին ամբոխի աղաղակները ճէրն է Աստուած, ճէրն է Աստուած:

Բայց ահա Մի օրուայ ուրխութիւնից յետ կեանքի սովորական ընթացքը կրկին սկսում է շարունակուիլ, Աքաբը նոյն Աքաբն է, Յեզաբէլն էլ նոյն Յեզաբէլն և ամբոխն, որ րոպէսպէս յափշտակուած էր մարգարէի եռանդով, անձնատուր է լինում անյազութեամբ կուսապաշտական արիւնային և զեղիլ ծեսերի ազդեցութեանց: Այն ժամանակ Եղիան, ինչպէս ամեն քերմ, եռանդոտ հոգիք մի ծայրահեղութիւնից միւսն է անցնում, նրան տիրում է

յուսահատութիւնն, նորա հաւատն աղօտանում է: Աստուած նորա համար, կարծես, անտեսանելի է դառնում, Տիրոջ ճանապարհները նրան անհասանելի են դառնում, նա տրտնջում է Աստուծոյ դէմ, որ սա մոռացել է իւր գործը: Ո՛րպէս հեշտ էր Աստուծուն պաշտպանել գործը, հարուածել նրանց, որոնք նրան ատում են և այսպէս վերջ տալ ջնջման գործքին, որ սկսուեցաւ Կարմիրում. բայց ոչ, երկինքը չէ բացուում, Աստուած լուում է, Յեզաբէլն առաջուայ պէս հզօր է և մարգարէի կեանքը վտանգի մէջ է:

Նշիան յուսահատուած փախչում է. նորա հոգին յոգնած է կեանքից, նա իրան անապատում ուզում է թաղել: Նա գնում է դէպի հարաւ, որքան կարելի է հեռու. Հրէից երկրից, ուր նա ի զուր պատերազմում էր ճշմարտութեան համար, նա ցանկանում է, որքան հնար է, հեռու լինիլ այդ ապերախտ և ունայնատէր ազգից, նա գրնում է մինչև Քորէք, նրան հարկաւոր են այս անսահման անապատըն, այն մերկ ու տխուր դագաթներն, այդ տրտում և վայրենի բնութիւնն, որ համապատասխան է նորա հոգեկան վիճակին: Այստեղ նա ցանկանում է մեռնել և երբ նրան առանձնութեան մէջ էլ Հետեոյ Աստուծոյ ձայնը կոչում է նրան՝ ինչո՞ւ դու այստեղ ես, Նշիա՛, նա պատասխանում է Աստծուն տրտում տրտնջանօք, նա դժգոհում է նորա դէմ, որ չէ պաշտպանել իւր գործն, որ կոչելով նրան՝ Նշիային ի պատերազմ, որ ամենածանրն է, թողել է նրան միայնակ մարտնչելու:

Նշիայը, չդատապարտենք մարգարէին, մինչև անգամ նորա յուսահատութեան մէջ ես տեսնում եմ նախանձախնդրութեան նոյն ոգին, որով բորբոքուում է նորա հոգին, նա գայթակղուում է նրանով, ինչով գայթակղուում են մեծ հոգիք, որոնց կրծում է լափում է ճշմարտութեան և սրբութեան ծարաւը: Տա՛ր Աստուած, որ մեր օրերում էլ տեսնէինք, թէ՛ և այնպիսի մոլորութեանց շնորհիւ, որպիսիք նորանն էին, նորա նման հաւատացեալներ:

Անտարբեր հոգիք ոչինչ չեն հասկանալ Նշիայի սգոյ վրդովմունքից, որովհետև նոքա չունեն բարձր վսեմ գաղափար, որին ձրգտում լինէին բոլոր հոգւով, որովհետև Աստուծոյ թագաւորութեան երկրիս վերայ հաստատութիւնն է, որոյ մասին նոքա ամենից քիչ

Հոգում են, որովհետև նոցա Հոգին երբէք չէ բորբոքուում ցանկութեամբ, որ արդարութիւնն ու ճշմարտութիւնը յաղթանակեն, ուստի և նոքա դիւրութեամբ Հաշտուում են այս երկրի իրերի ընթացքի հետ, վճռելով իրանց մէջ, թէ իրանք անկարող են փոխելու այդ ընթացքը. նոցա Հայեցակէտով իմաստութիւնն այն է, որ չդիմադրեն մարդոց կարծեաց, որպիսիք և լինէին սոքա և նոքա այսպիսի Համոզումն ամենընտիրն են Համարում և փիլիսոփայութիւններէց ամենիմաստունը:

Ի՞նչ Հարկ կայ բարեփոխել աշխարհս, ինչ Հարկ է նախապաշարմունքներն ու կրքերը գրգռել իւր դէմ, երբ կարելի է, առանց այդ գործելու, ապրել երջանիկ և անդորր կերպով: Առտի և նոքա անուանում են մոլեռանդութիւն այն ամենն, ինչ որ նոցա Հասկացողութիւնից բարձր է և Եղիայի նման մարդիկ, երբ էլ սոքա յայտնուէին երկրիս երեսին, նրանց անմիտներ կթուփն: — Իայց եթէ մարդս միայն եռանդով ցանկանում է ճշմարտութեան յաղթանակին, եթէ նա տանջուում է, տեսնելով, որ Աստուծոյ անունը չէ պաշտուում, Նրան իրան վայել փառքը չէ տրուում և որ արդարութիւնն ոտնակոխ է լինում, այդպիսի մարդն առաջ բերած պատմութեան մէջ կտեսնէ իւր կենսագրութիւնն և մարգարէի վշտի մէջ իւր անձնական թախիծը կնկատէ:

Ինչ թուում է, թէ այսպէս փորձուեցան առաջին դարերի քրիստոնեայք, երբ նոքա ակնկալութիւնից յետ, որ ընդհանրացած էր նախնական եկեղեցու մէջ, թէ անյապաղ պիտի լինի Յիսուսի Քրիստոսի երկրորդ գալուստն ու Յայտնութիւնն իւր բոլոր փառքով, տեսան որ ճշմարտութիւնը ստիպուած է յամրութեամբ և տակաւ առ տակաւ նուաճելու Հոգիք, պաշտպանելու իւր գործը կեսարների առաջ, երբ նոքա տեսան, որ եկեղեցին դժուարութեամբ է աճում և ենթարկուած է նոյն պայմաններին, որոց ենթարկուած են և մարդկային Հաստատութիւնք, և որ նա վերջինների նման ունի իւր թուլութիւնքն ու թշուառութիւնքը, տեսան, որ նա՝ եկեղեցին, երբեմն տկարանում էր պատերազմում և երբեմն էլ Հալածանաց ժամանակ ունենում էր Հազարաւոր Հետեալներ իրանից:

Նոյն փորձութիւնն է և մեր օրերում նոցա Համար, որոնք յոյս

ունէին տեսնելու Աւետարանի յաղթանակն, եկեղեցու տարածումն, քրիստոնէից միութիւնն, որոնք խմբուած լինէին իրանց տիրոջ խաչի պատուանդանի մօտ, մի խօսքով տեսնելու մէկն այն մեծ կրօնական շարժողութեանց, որոնք փրկոււմ են հոգիք և աշխարհը, բայց որոնք ստիպուած են տեսնելու այն, ինչ որ մենք ենք տեսնում, այն է մի Հասարակութիւն անտարբեր դէպի կրօնն և մինչև իսկ սրբապիղծ, բաժանեալ, թոյլ, առանց մեծամեծ եռանդների, առանց սուրբ ձգտումների և տեսնելու, որ Աստուծոյ արքայութեան յաջողութիւնն ըստ երևոյթին կախուած է բոլորովին արտաքին դիպուածներէրից և մարդկային գործից: Եւ ահա այս ամենը տեսնելով, Հաւատը տատանուում է: սրտերը վրդովում են, մարդիկ սկսում են երկբայել, ինչպէս երկբայում էր Եղիան Աստուծոյ ներգործութեան մասին աշխարհիս վերայ, Եղիայի նման մոռանում են նոքա Նորա կամքի յայտնութեան հետքերն անցեալում և եթէ վրդովման այս ընդհանուր պատճառների հետ միանան մասնաւոր փորձութիւնն, երկարատեւ անարդարութիւնն, որոյ ճշման ներքոյ մարդս տանջուում է, ծանր, անբացատրելի, յանակնկալս Հարուածող թշուառութիւնն, այն ժամանակ այս նեղութեանց պատճառով մինչև անգամ ոգւով ամենագորեղ անձանց կրծքից էլ դուրս կթուչի վշտի և տրտնջանաց աղաղակն. այս տանջանքները նրանց յուսահատութեան կարող են Հասցնել:

Քրիստոնեայք, որ տեսած էք այս փորձութիւնքը, դուք գիտէք և այն, թէ որքան սարսափելի են դոքա. բայց և այնպէս, Համարձակուում ձեզ ասել, որ այսպիսի վշտերն — ընտրեալների վշտեր են: Նատ աւելի վատ կլինէր, թէ դուք Հաշտուէիք նորա հետ, ինչ որ կատարուում է ձեր շուրջն, եթէ դուք ձեզ լաւ և թեթեւ զգայիք այն աշխարհում, ուր Աստուծուն իրանց Համար օտար են ճանաչում, եթէ դուք կարողանայիք սառնութեամբ վերաբերուելու դէպի այն բոլոր անարդարութիւնքն, դէպի այն բոլոր տանջանքներն ու անզգամութիւններն, որոնց մենք ամեն քայլում Հանդիպում ենք, եթէ ձեզ գոհացնէր այս կեանքն ու աշխարհն այն կերպարանքով, որ տուել է նրանց մեղքը:

Աւետարանն ասում է. երանի, որ քաղցեալ են և ծարաւի վասն արդարութեան:

Այո՛, վշտանալ և տանջուիլ ինչպէս տանջուում էր Եղիան, Յովհաննէս Մկրտիչն, ինչպէս տանջուում էր Պօղոս — այս է ամենընտիրն ու ամենամեծը երկրիս վերայ. որովհետև միայն այս պայմանով կարելի է Աստուծո՛ւ մտիթարութիւն գտնել: Տեսնենք ինչպէս խրատում է Աստուած Եղիային և այն խրատի մէջ որոնենք և նրանից առնունք մեզ զօրութիւն:

Եւ ասաց Աստուած Եղիային. «Ե՛լ և կա՛ց լեւան վերայ Տիրոջ առաջ». մարգարէն կատարում է Հրամանը: Կանգնած Քորեբ լեւան գլխին, որտեղից նա տեսնում է անապատն ու երկինքը, սպասում է, որովհետև Տէրը կերևի նրան և կխօսի նորա հետ:

Նա նայում է և ահա Հորիզոնում բարձրանում են փոշու ամպեր, շնչում է անապատի ուժգին Հողմն, ինչպիսիք լինում են արևելքում:

Երկինքը շուտ ծածկուում է մռայլ և կապտագոյն ծածկոցով: Հողմի կատաղի և երկար շառաչման հետևում է փոթորիկը, ծառերը խորտակուում են և արմատախիլ լինում. ժայռերն տատանուում են, անապատի առաջն արեկոծուում է շարժուն բլուրների նման, ինչպէս կատաղած ծովի ալիքը — փոթորիկն անցնում է բայց «ոչ ի Հողմն է Տէր»:

Նա էլի նայում է և ահա նորա աչքերին, որոնք արդէն ազօտ են տեսնում, թուում է, թէ Հորիզոնը շարժուում է . . . ժայռերը դողում են, երկիրը պատառուում է, լեռոն, որոյ վերայ կանգնած է կարծես, շրջում է, հիմքից տատանուում է — սա շարժումն է, երկրաշարժ է, որ անդունդն'ը է բաց անում, որոնք պատրաստ են ամեն ինչ կլանելու: Մի քանի րոպէ բնութիւնն ենթարկուում է այս զարհուրելի սարսափին. բայց «ոչ ի շարժմանն է Տէր»:

Եղիան էլի նայում է, և ահա մի արտասովոր լոյս լուսաւորում է նորա տեսած բոլոր տարածութիւնն, երկնային հուր պատել է երկիրս: Հրդեհի շառագոյն բոցը, մրրկի խաւարի մէջ փայլելով, կայծակի արագութեամբ շարժուում է, վազում է, օձի նման գալարուում է լեւան զառիվայրներում, այրում է չորացած խոտն ու

Հողմի խորտակած ծառերը: Կարճ միջոցում բոլորը շրջապատած է կրակի հեղեղով, որոյ կիցիչ ալիքները, պտոյտներ անելով, բարձրանում են դէպի երկնքի մուայ կամարը: Եղիան գարհուրած ընկրկում է, բայց «ոչ է հուրն է Տէր»:

Փոթորիկ, երկրաշարժ, հրդեհ — ոչ ապաքէն այս ամենն էր խնդրում Եղիա, երբ նա, վշտացած և յուսահատած, տրտնջում էր Աստուծոյ դէմ Նորա անգործունէութեան և Նորա անհասանելի լուութեան համար: Նա չէր ասում արդեօք նրան այսպէս. «վեր կաց Տէր, պաշտպանիր Քո դործդ, ջնջիր Քո թշնամեացը երկրիս երեսից, ինչպէս փոթորիկը տանում է անապատի աւազն, ոչնչացնու նրանց Քո բարկութեամբ, ինչպէս յարդ այրիւր նրանց»: Եւ ի՞նչ. նա տեսաւ այս հզօր, անդիմադրելի և սարսափելի զօրութիւնն և փոթորկի մէջ, որ իւր անդիմադրելի ուժով ամեն ինչ տեղահան էր անում, և՛ երկրի ի հիմանց շարժման մէջ, և՛ հրոյ մէջ, որ ջնջեց բոլորն, ինչոր անվնաս մնացել էր փոթորկից: Այս զօրութիւնը նա տեսաւ, նա դողում էր. բայց այստեղ չէր Տէրը: Ո՞ր է ուրեմն նա և որպիսի երևոյթի մէջ Եղիան կարող է տեսնել Նորաներկայութիւնը:

Մարգարէն շուտով կիմանայ այս:

Փոթորկի գարհուրելի երևոյթն անցաւ. Նորա շառայիւնը դադարեցաւ:

Այդ շառայման տեղ տիրեց խաղաղութիւնը, կայծակի գարսափեցնող փայլին փոխարինեց օրուայ պայծառ և զովարար լոյսը: Երկինքը կրկին երևեցաւ, արեւելքի թանձր կապուտակ և թափանցիկ նրկինքը. բնութիւնը կարծես, վերածնում է, նա աւելի ճոխ է և լի բերկրութեամբ և Հովիտների խորքից մինչև Քորերի գագաթն և մինչև այն այրն, ուր թագնուել էր Եղիան: մեղմ Հողմոյ ձայն է լսուում, լսուում է Աստուծոյ շնչամբ նոր կենդանութիւն առած բնութեան շարժումն: Եղիան դուրս է գալիս իւր միայնութեան տեղից. Նորա հոգին, որ վրդոված էր սարսափից, այժմ պատած է անբացատրելի յուզմամբ, նա լի է անդորրութեան, թարմութեան, զօրութեան և ուրախութեան հիանալի զգացմամբ: Նորա հոգին չշարժեցին խստութեամբ ոչ փոթորկի շառայիւնն և ոչ էլ բնութեան խառնաշփոթութիւնը: Այդ մեղմ օդի (Հողմի) ձայնի մէջ

նա ճանաչեց Աստուծոյ ներկայութիւնն և մաշկեակով ծածկելով իւր երեսը նա խոնարհում է իւր գլուխն և նրկրպագում Տիրոջը:

Այսպէս, եղբարք. միթէ ես իրաւունք չունէի պնդելու այն, ինչ որ ասացի, միթէ Հին Ուխտից առած այս պատմութիւնը չէ տալիս Հրաշալի եղանակով նախազգալու այն բարձր յայտնութիւնն, որ Աստուած պէտք է տար մարդկութեան Աւետարանով: — Այն Աստուածն, որոյ ներկայութիւնն Եղիան գիտէր ճանաչել միայն Նորա արդարութեան և բարկութեան գործողութեանց մէջ, վրէժխնդրութեանց Հզօր Աստուածը, Հարուածելով և պատժելով դեռ ևս չէ ասում իւր վերջին խօսքը:

Նա ուղարկում է իւր Հրեշտակներին Հողմոց թւերի վերայ և Հրոյ բոցն իրան ծառայեցնում. բայց և այնպէս Նա ոչ այն փոթորկի մէջ է, որ ամեն ինչ խորտակում է, ոչ այն կրակի մէջ է, որ ամեն ինչ լափում է, և եթէ Սինայի վերայ տուած օրէնքն, եթէ Իսրայելացւոց ազգին տուած Աստուածպետական կառավարութիւնն աշխարհիս Համար Նորա սրբութեան և արդարութեան յայտնութիւն էին, պէտք է դար այն օրն, երբ նա կ'յայտնէր աշխարհին, որ Նորա անունը Սէր է:

Եղիան դեռ ևս չի ըմբռնել խորին և իսկական իմաստն այս տեսլեան, որ Նորա Հասկացողութիւնից բարձր է և Նորանով, որ ինչ Հետեւում է անմիջապէս վերը պատմածին, Տէրը յայտնում է նրան միայն մասամբ Նորա նշանակութիւնը:

Այսպէս, Նա Հրամայում է նրան դառնալ իւր ճանապարհով և երթալ Ազալէի, Յեռուի և Եղիսէի մօտ, որոնք երեքն էլ կղաւնան Նորա վրէժխնդրութեան գործիքներ և կ'պատժեն Աբարին, Յեզաբէլին և կռապաշտ ազգին . . . :

Ազալէ, Յեռու և Եղիսէ — սոքա Հողմ, շարժումն և Հրդեհ են, որոնք Տէրը կղրկէ, երբ Հարկաւոր կտեսնէ . . . այսպէս Աստուած

կ'ներգործէ, կ'Հասնի վերջապէս Նորա բարկութեան օրը. բայց Եղիան պէտք է գիտենայ, որ Նորա վերջին խօսքը վրէժխնդրութիւն չի լինիլ: Այս սարսափելի գործողութեան մէջ Աստուած չի յայտնուիլ կատարելապէս և Նորա իսկական յայտնութիւնը դեռ ասպազայումն է:

Այս յայտնութիւնը, եղբարք, մենք նրան տեսանք: Ո՞րպիսի բարի աւետիք է, որոյ նախատիպն էր այն մեղմ հողմոյ ձայնն, որ լրսեց մարգարէն: Ականջ դրէ՞ք և այն գիշերն, որոյ յիշատակն այսօր տօնում ենք, \*) ի միտ առէք Հրեշտակաց այն երգն, որ իջնում է երկնքից Բէթզէհէմի դաշտը. «Փառք ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ Հաճութիւն»: Մօտեցէ՛ք այս օրօրոցին, ուր Աստուծոյ մեծութիւնը միացաւ մարդկային ստորնութեան հետ, զննեցէ՛ք այս մանկան, որ երկրիս ամենաչքաւորն էրի մէջ ծնաւ, ոչ մի երկրաւոր փայլ չէ շրջապատում նրան, ոչինչ ձեզ նրանից չէ հեռացնում, այստեղ ձեզ ոչ մի բան երկիւղ չէ ազդում. այստեղ ամեն ինչ պարզ է և ճոխ արտաքինով չէ յափշտակում մարդուս. մինչդեռ Հէնց այստեղ երկնքի և երկրի Աստուածն իսկապէս յայտնեց իրան աշխարհիս և Բէթզէհէմի այս աղքատիկ մնուրից կծագի աշխարհիս փրկութիւնը: Նա կաճի — նա, որոյ ծնունդը գրեթէ աննկատելի կերպով անցաւ . . . նա կաճի, ըստ մարգարէին, իբրև մի քնքոյշ ձող . . . ոչ մի արտաքին փայլ չի շրջապատիլ նրան, ոչ մի բան չի յիշեցնիլ սպառնալից մեծութիւնն այն պատժոյ Աստուծոյ, որին կոչում էր Նղիան. այն արքայական գաւազանի փոխարէն, որ երազում էին Հրէայք Մեսիայի Համար, նա կըռնէ իւր ձեռքում եղէգն, յաղթողի պսակի փոխարէն նորա գլխին կընուի փշեայ պսակ. նորա ձայնը չի սպառնալ փոթորկի և որոտման շառաչիւնի նման. ո՛չ. նա կաւետէ ներողութիւն, խաղաղութիւն և փրկութիւն: Նա կասէ երկրիս վշտացեալներին. «Նկէ՛ք առ իս, ես Հեզ եմ և խոնարհ սրտով»: Իւր թշնամեաց Համար նա կունենայ միայն աղօթք և իւր խաչողների՝ սուրբ օրհնութիւն. նա կանարդուի, կանպատուի, Հայհոյանաց բաժակը կխմէ և վերջապէս կմեխուի անարգանաց փայտի վերայ — բայց այս անչափ անպատուութեանց մէջ նա ցոյց կտայ աշխարհին ցայժմ չտեսնուած մեծութիւն, սիրով տարած յաղթութեան մեծութիւն, մեծութիւն սիրոյ առ մերձաւորս, մեծութիւն, որ անձնագոհութեան է Հասնում . . .

Ոչ մի բանի հետ անհամեմատելի մեծութիւն կփայլի նորա արիւ-

\*) Այս քարոզը ասած է 1865 - ին Փրկչի ծննդեան երեկոյին.

Նոս գլխի շուրջը և այս լուսթեամբ տանջուող զոհի մէջ մարդկութիւնը կճանաչէ իւր թագաւորին: Այն ինչոր չէին կարող գործել ոչ զօրութիւնն և ոչ էլ երկիւղը, կկատարուի Նորա խաչով . . . խղճերը կյուզուին, սրտերը կկակղանան, եկեղեցին կհիմնուի, մարդկութիւնը կվերանորոգուի և նոր ծննդով ծնուած մարդիկ կըսկսեն հաստատել երկրիս վերայ Աստուծոյ թագաւորութիւնը, նոցա՝ մարդոց հասարակութիւնը՝ կաճի, ղեկավար իրան ունենալով հաւատքը, սէրն և յոյսը, նա ազգեր կնուածէ և եկեղեցին տասն և ութը դարերից յետ փրկութեան աւետիքը կքարոզէ աշխարհիս ամեն երկիրներում, սպասելով այն օրուան, երբ խաղաղած աշխարհումս կլինի մի հովիւ և մի հօտ: Եղբարք, այս փրկող սիրոյ յաղթանակի առաջ խոնարհենք մեր գլուխն և երկրպագենք Աստուծուն Եղիայի նման, որովհետև յիրաւի այստեղ է Տէրը:

Այսպէս մենք տեսանք այն Հիանալի տեսլեան իսկական բուն նշանակութիւնը, մենք գիտենք թէ ինչ կնշանակէ այն «մեղմ օրոյ» ձայնն, որ Եղիայի Հոգին սուրբ երկիւղածութեամբ լցրեց մենք գիտենք, որ Աստուած սէր է: Այժմ մնում է մեզ նկարագրած դէպքից հանել մի քանիսն այն խրատներից, որոնք ծածկած են նորա մէջ:

Ամենից առաջ ուսանենք չքննելու յաւիտենական Աստուծուն: Ինչպէս ասացինք, յաճախ Աստուծոյ երկայնմտութիւնը զարմացնում է մեզ, Նորա լուսթիւնը մեզ անբացատրելի է թուում: «Ինչո՞ւ նա չէ գործում», հարցնում ենք մենք. «Ինչո՞ւ նա թոյլ է տալիս դիմադրելու ճշմարտութեան, ինչո՞ւ նա թոյլ է տալիս յարձակուել և երբեմն և հարուածելու նրանց, որոնք նրան հաւատարիմ են: Ինչո՞ւ նա թոյլ է տալիս, որ չարիքը յաղթէ և զօրանայ»: Թէև այս մեր բերանը չէ խոստովանում, մեր յուզուած, անհամբերութեամբ լի սիրտը կոչում է Նորա արդարադատութիւնը, գուցէ և աղօթում է, որ նորա բարկութիւնը յայտնուի . . . մէջ Նորա բարկութիւնը . . . Ոհ եղբարք, Եղիան այս բարկութիւնը կոչելիս չգիտէր այն, ինչ որ մենք գիտենք. նա չէր տեսել Սուրբին և Արդարին խաչի վերայ մեռնելիս, նա չէր ճանաչում ողորմածութեան այն զօրութիւնն, որ ատելութիւնից հօր է և որով նուաճուեցան սրտերն ու հիմնուե-

ցաւ Աստուծոյ արքայութիւնն երկրիս վերայ:

Նորա բարկութիւնը կոչել . . . ի՞նչ պատասխանել կարող կի-  
նէիք: եթէ սա առաջ մեր վերայ շարժուէր: Արդեօք մենք աւելի  
պակաս արժանի ենք այս բարկութեան, քան նոքա, ոչք մեզ վրդո-  
վում են և դրդուում: եթէ մենք կշռենք բոլոր մեր ստացած բա-  
բերարութիւնքը, մեզ լուսաւորող շնորհատու լոյսն, այն երկայն-  
մտութիւնն, որ մեզ պահպանել է: բոլոր այն դէպքերն, երբ մենք  
ակնյայտնի վտանգից ազատուել ենք, և եթէ ողորմած Աստուծոյ  
մեզ ցոյց տուած այս բոլոր խնամոց դէմը դնենք այն բոլորն, ինչ որ  
մենք գործել ենք — դիմադրութիւն, ապերախտութիւն, ստորնու-  
թիւն, ծածուկ մեղքեր, գուցէ և եղեռնագործութիւնք, այն ժամա-  
նակ, եղբարք, կարող ե՞նք արդեօք, կհամարձակե՞նք արդեօք կոչե-  
լու վրէժխնդրութեանց Աստուծոն: Առաւել ուրախանանք, որ ար-  
դար դատաստանի օրը յետաձգուում է: ուրախանանք, որ թէ  
այլոց և թէ մեզ մնում է ժամանակ ապաշխարելու: ժամանակ  
փրկութեան: Յիշե՛նք, որ մարդկային բարկութիւնը չէ կարող չափ  
լինել Աստուծոյ արդարադատութեան և չարին յաղթելու համար,  
Հետեւե՛նք Աստուծոյ Նախախնամութեան օրինակին, որ թէև կա-  
րող էր ամեն ինչ ընկճել զօրութեամբ, բայց աւելի ցանկանում է  
յաղթել սիրով:

Այս խրատի հետ միասին ես իմ առած բնաբանի մէջ գտնում  
եմ եւ միթարութեամբ լի իմաստ էլ: Ո՞վ մեզանից քննելով մարդ-  
կութեան պատմութիւնն կամ իւր սեպհական կեանքն, երբեմն չէ  
ընկել անհաւատութեան տարակուսանաց մէջ, որովհետև նոցա՝  
մարդկութեան և իւր պատմութեանց զննութեան մէջ, նա ի զուր  
որոնել էր Աստուծոյ Նախախնամութեան հետքերը: Այսպիսի ը-  
պէնեբում ո՞վ մեզանից չէ ցանկացել իմանալ Աստուծոյ, Սրան մի-  
այն յայտնի գաղտնիքի մեկնութիւնը: այո՛, Նորա անհպանելի և  
ծածուկ ճանապարհների գաղտնիքի, որոնք մեզ վրդովում էին: Եւ  
ահպ այս գաղտնիքը Աստուած յայտնում է մեզ Եղիայի տեսեան  
մէջ, այս գաղտնիքը սէրն է:

Սէրը վերջնական և վսեմ բացատրութիւնն է Աստուծոյ գործողու-  
թեանց մարդկութեան պատմութեան և մեր իւրաքանչիւրիս անհատա-

կան կեանքի մէջ, սէրն և ոչ բարկութիւնը, սէրն և ոչ վրէժխնդրութիւնը, թէև մեր սիրան երբեմն այլ բան է ենթադրում և խորհում: Բայց և այնպէս Հասկացէք, եղբարք, որ թէև Աստուած սէր է, բայց մենք պարտական ենք յիշելու, որ եւ Հոգիի եւ երկրաշարժի և ամեն ինչ ոչնչացնող կրակի ուղարկողն էլ Նա է: Հաւատարմով Աւետարանին, երկնչե՛նք մուսնալու Տիրոջ Հզօր բազուկն և Նորա մասին թող և մեր ժամանակի ոգուն շատ Համաձայն գաղափար կազմելու: Ոչ և մեզ Համար՝ Տէրն է թագաւորում, և մենք Հաւատում ենք, որ Նա է կառավարում ազգերի կեանքն և որ բոլոր աշխարհս յուզող — արեկոծող վտփոխութիւնք Նորա Հրամանով են, Նրանից կարգադրած են . . . : Եւ մի՞թէ Նորա դատաստանի այս արտայայտութիւնը տեսանելի չէ լինում մարդկութեան պատմութեան մի քանի յայտնի էջերում, երբ մենք, ինչպէս պատահեցաւ Բաղդասարի Հետ, սորա Աստուած խնջոյքի ժամանակ Բաբելոնում, ճանաչում ենք այն խորհրդաւոր աջն, որ զբում է մահուան դատաւիճիւ անօրէն պետութեանց Համար: Երբ ընկնում է Նինուէն կամ Բաբելոնը, երբ խորտակուում են Հսկայական Հզօր պետութիւնք, մի՞թէ սորա մէջ մենք չենք տեսնում Աստուծոյ դատաստանը: Երբ Յիսուս Քրիստոսին սպանող Երուսաղէմն ոտնակոխ է լինում Հեթանոսներից, երբ Հերկուում է այն տեղն, ուր կանգնած էր Նորա Հոյակապ տաճարն և արքորուած Իսրայէլը թափառում է բոլոր աշխարհիս երեսին, զարմացնելով պատմաբանին աշխարհիս երեսին իւր միակ, անօրինակ վիճակով արդեօք մենք սոցա մէջ չե՞նք տեսնում կատարումն այն զարհուրելի խօսքերի թէ՛ արիւն Նորա ի վերայ մեր և որդոց մերոց եղիցի: Երբ նոյն իսկ Հռովմն, որոյ անկումն Յայտնութեան գաղտնատես Ս. Յովհաննէսն չորս դար առաջ գուշակեց, առնուեցաւ բարբարոսներից և երբ նրան աւերող և խորհրդաւոր ճակատադրին Հլու Հնազանդ Աստիւան և Գենգերիկոսն իրանք իրանց կոչում են Աստուծոյ խարազան և նաւը նստելիս ասում են իրանց ղեկավարին. «Թ՛ող առագաստները տանեն մեզ այն կողմ, դէպի ուր շնչում է Աստուծոյ բարկութիւնը» — կարո՞ղ ենք մենք արդեօք սորա մէջ չճանաչել պատժող Նախախնամութեան ներգործողութիւնը:

նրն և եթէ այս մենք մոռանայինք, արդեօք մեր փոխանակ նոյնը չէի՞ն պատմիլ ծխուող աւերակներն, որոնք ամենուրեք նոցա արշաւանաց վկաներն ու նշաններն էին: Աւերջապէս երբ մենք տեսնում ենք նորագոյն պատմութեան մէջ, որ քրիստոնէութեան դէմ մարտնչող և նրան մերժող բոլոր պետութիւնք անխուսելի կերպով լուծուում են և մեռնում, մինչդեռ լուսաւորութիւնը, յառաջադիմութիւնը, խղճի ներգործութիւնը, իսկական ազատութիւնը գոյութիւն ունեն միայն և եթ խաչի հովանեաց ներքոյ և այնտեղ, ուր Աւետարանն է դեկավարում ազգերի կեանքն. երբ ամեն ինչ ապացուցանում է, ինչպէս դեռ նորերումս հրապարակաւ խոստովանեցաւ մեծ Հանրապետութեան նախագահը, Հանրապետութեան, ուր առանց ամաչելու խոստովանում են, որ դաւանում են կենդանի Աստուծոյ անունը\*), երբ ամեն ինչ մեզ ապացուցանում է, որ արդարութիւնը բարձրացնում է ազգերին, իսկ մեղքը նոցա անկման պատճառ է լինում, ակներև է, որ մենք պէտք է բոլորովին կոյր լինէինք, որ ուրանանք Աստուծոյ նախախնամութեան ներգործութիւնն ազգերի պատմութեան վերայ եւ մռայլ օրերում իսկ, և որ նա է ուղարկում, ինչպէս երևեցաւ Նղիայի տեսեան մէջ, զարհուրելի մըրրիկն ու ամեն ինչ ջնջող կրակը: Այո՛, Աստուած թագաւորում է. այս պէտք է պնդել և բարձրաձայն քարոզել այն լուսաւորութեան առաջ, որ, գինեհարուած իւր յառաջադիմութեամբ նիւթական գործերի մէջ, անդադար արտայայտում է արհամարհող անտարբերութիւն, վիրաւորիչ արհամարհանք դէպի անտեսանելի աշխարհի իսկապէս գոյութիւն ունեցող երևոյթները. պէտք է նրան յիշեցնել, որ նա չէ կարող անպատիժ գործել և շատանալ առանց այդ բարձր աշխարհի և որ, երբ անտեսանելի աշխարհը չէ ճանաչուում ու բնդունուում, նորա տեղը բռնում են չարի զօրութիւնքը: Պէտք է յուշ ածել այդ լուսաւորութեան, որ Աստուծոյ դատաստանն արթուն է, չէ նիրհում, թէև երբեմն այսպէս թուում է և որ Աստուծոյն բաւական է միայն — նրան մոռացող ազգերին պատժելու:

\*) Ա. Կնարկ է հիւսիսային Ամերիկայի միացեալ նահանգների նախագահ Զոնսոնի շրջաբերականի վերայ.

Համար — լոկ մի օրով մատնել նրանց կրքերի չարութեան իշխանութեան, կրքերի որոնց յուզումն երևում է նոցա մէջ, բաւական է մատնել նրանց նիւթապաշտութեան ակեաց մակընթացութեան, որին նա միայն կարող է ասել. «Ի՞նչ աւելի առաջ չես կարող անցնել»: Պէտք է նրան յիշեցնել, որ Հասարակութեան բարձր դասի բարուց ապականութիւնն, որ երևում է յոյժ անչափ շուայութեան մէջ, ստորին դասակարգի մէջ գրգռում է և յարուցանում ատելութիւն և վայրենի կրքեր, որոնք, եթէ արձակութիւն զտնէին, այնպիսի զօրեղ բարոյական փոթորիկ կբարձրացնէին, որ Համեմատաբար այն փոթորիկն, որ տեսնում էր Քորեբի գլխից Եղիան, լոկ տղայական խաղալիք կթուէր:

Պէտք է ի վերջոյ յիշեցնել, որ Աստուած սուրբ է, որ Նորա սրբութեան վերայ կատակ անել անհնարին է և որ Նորա դատատանն, ինչպէս իւրաքանչիւր մարդու վերաբերմամբ առանձնապէս, նոյնպէս և ազգերի վերաբերութեամբ անսուտ ճշմարտութիւն է:

Այո՛, Աստուած թաղաւորում է պատմութեան մէջ. բայց եւ Հաւատարմով իսկ Նորա ամենազօր Նախախնամութեան, ինչպէս յաճախ մենք պատմական դէպքերի հոսանքում, կորցնում ենք Նորա Նախախնամութեան Հետքերը:

Ինչպէս յաճախ այն, որ կատարուում է այս աշխարհումս, դառնում է մեզ Համար Լաբիրինթոս, որոյ մէջ մենք մոլորուում ենք: Եւ մինչև անգամ Աստուծոյ դատավճիռների մէջ որքան շատ այնպիսի բաներ կան, որոնք մեզ Համար անբացատրելի են. Այսպէս աւաղ՝ ես տեսնում եմ, որ Նորա արդար բարկութեամբ յարուցած այս մրկող անմեղն էլ Հարուածուում է մեղաւորի Հետ, ես տեսնում եմ, որ որդիք տուժում են իրանց Հարց մեղաց Համար, տեսնում եմ, որ մի քանի սերունդ տանջուում է այն անարդարութեանց Համար, որ նոցանից առաջ կատարուել են, ես տեսնում եմ, որ ճակատագրական ճշման բաղդը խորհրդաւոր կերպով ձնշում է երբեմն մասնաւոր մարդուն կամ ամբողջ ազգեր, ես տեսնում եմ բռնութեան և ճարպիկութեան յաղթանակն, այնինչ բարի ձեռնարկութիւնք ոչնչանում են, այնպէս որ մի կողմից իմանալով, որ այս ամեն դէպքերը, մինչև անգամ այնպիսիք, որոնք

վրդովում են ինձ, թոյլատրուում են Աստուծոյ կամքով, միւս կողմից ես զգում են նոյնպէս ակնյայտնի կերպով և այն, որ նոցա մէջ Աստուած կատարելապէս յայտնուած չէ:

Եւ ահա այս ժամանակ Նղիայի տեսած տեսիլը բերում է ինձ բերեալ և իսկ Աստուածային լոյս, որովհետև նա ցոյց տալով ինձ Աստուծոյ աշխարհին ուղարկած պատիժները, մի և նոյն ժամանակ ուսուցանում է նրանով ինձ, որ այս պատիժների մէջ Տէրը չէ տալիս Իրան ճանաչելու այնպէս, որպիսի նա է — այս տեսիլն ուսուցանում է ինձ, որ նորա ճանապարհների գաղտնիքն այլ բանումն է, որ բոլոր այդ գաղտնիքը — սիրոյ մէջ է, որը պատմական իրողութեանց ժամանակագրողը չէ կարողանում ինձ բացատրել, բայց որը (սէրը) Աստուած տալիս է ճանաչել Հոգւոյ լուսութեան խաղաղութեամբ, Հոգւոյ, որ ներողութիւն է ստացել և Հաւատում է նորա խօսքին, լսում է նրան և նրանից ուսանում է:

Ամուր Հաւատով պահեցէք այս մխիթարութիւնքն, ով տանջուող Հոգիք: Գուցէ դուք ներկայ ընդհին տանջուում էք փորձութեան ծանրութեան ներքոյ, կարծես իրօք Աստուած իւր բոլոր զօրութեամբ դարձել է ձեր դէմ և դուք ձեր կեանքի մէջ տեսած էք ձեր վերայ կատարուած այն ամենն, ինչ որ սարսափելի բան կալ Նղիայի տեսլեան մէջ: Կեանքի վշտերից ձեր յոյսերը յօղս ցնդել են, ձեր երջանկութիւնը խախտուել է ձեզ սիրելի էակի մահուան օրն և ձեր սիրտն անցնում է այն փորձութեան միջով, որ Ս. Գիրքը տանջանաց բովք է կոչում . . . : Ձեզ խորհուրդ էին տալիս այդ ձեզ սարսափեցնող Հարուածների մէջ Աստուծոն ճանաչել, բայց ձեր սիրտը զարհուրելով — դողում էր և Նղիայի պէս դուք դեռ սպասում էք . . . Յիրաւի դուք իրաւունք ունիք, որովհետև թեպէտ այդ փորձութիւնք Հասան ձեզ ոչ առանց Աստուծոյ կամաց. բայց ոչ նոցա մէջ նա կ'յայտնէ ձեզ իւր կամքն և իւր խորհրդի գաղտնիքները . . . Հաւատացէք. մերձենում է այն օրն, երբ դուք կլսէք այն Բեւժ օրոյ ձայնն, որ յափշտակեց մարգարէի լսելիքը, Տիրոջ այն գաղտնի ձայնն, որ միայն վրդոված Հոգուն ներշնչում է խաղաղութիւն և լցնում է նրան անբացատրելի մխիթարութիւններով: Կլսէք դուք այս ձայնն և այն ժամանակ կձու-

նաչէք, որ սէրն էր քար անկեան նախախնամութեան բոլոր ճանապարհներէ, որ միայն սէրը կարող է բացատրել ձեր վիշտերը, դուք այս կիմանաք, կհասկանաք և այն ժամանակ դուք, Եղիայի նման, կխոնարհիք և ծածկելով ձեր երեսը կասէք. «Արդարև այստեղ է Տէրը»:

Նղբարք, տեսիլքից յետ, որոյ վերայ Եղիան նայում էր Քորեբի գագաթից, նա լսեց Տիրոջ ձայնն, որ ասում էր. «Իարձի՛ր քո ճանապարհովդ անապատի միջով Դամասկոս»: «Յետ դարձի՛ր» այս այն խօսքն էր, որ նա պէտք է լսէր, նա, որ վտանգի օրը թողեց իրանցոյց տրուած պաշտօնի տեղը: Յետ գնա՛ քո ճանապարհովդ անապատի միջով, այն ճանապարհով, որ նա երբէք չպիտի կոխէր, որովհետև Տէրը նրան անապատը չէր կոչել: Իարձի՛ր նոցա մօտ, որոց առաջ դու պէտք է վկայես իմ մասին: Իարձի՛ր այնտեղ, ուր քեզ սպասում են ատելութիւնը, արհամարհանքն ու հալածանքը: Իարձի՛ր, որովհետև եթէ Նա ամրապնդեցի քո հաւատը և պահպանեցի քո թուլացած սիրտդ, երևելով քեզ սուրբ լերան վերայ, այդ նորա համար չէր, որ քո ոգին մնար այնտեղ ընկղմած խորհրդածութեանց մէջ, այլ նորա համար էր, որ աւելի զօրացած հոգով և աւելի քան երբ և իցէ հաւատարիմ գոլով իմ գործին, երթաս ծառայելու ինձ այս աշխարհումս, որ ինձ մոռանում է և իրան կորցնում: Լսենք ուրեմն Աստուծոյ այս հրամանն և թող նա մեզ լինի զօրութիւն: Գուցէ մենք էլ այստեղ եկած ենք Եղիայի նման ընկած ոգով և տրտնջալով. նորա նման կրկին անգամ մենք ճանաչեցինք Աստուծոյ ճանապարհներէ դաղտնիքը. բայց աւելի բաղդաւոր լինելով քան նա, մենք տեսանք սէրն, որ Յիսուս Քրիստոս յայտնեց աշխարհին. որ և է մեզ համար այն բարձր խօսքն ու կատարեալ բացատրութիւնն այն ամենի, ինչ որ պատահում է մեզ մեր կեանքում: Դառնանք ուրեմն, եղբարք, դառնանք և մենք կատարելու մեր պարտքը, դառնանք այն մոլորեալ հոգիներէ մօտ, այն հասարակութեան մօտ, որ ունայնութեան է անձնատուր, այն չհաւատացող աշխարհն, որի առաջ, Աստուծոյ կամքն է, որ մենք նրան վկայենք:

Դառնանք այս աշխարհն, որպէս զի նորա մէջ լինենք Հեզ, Հոգ-

ուով զօրեղ, ճշմարտութեան հաւատարիմ, դառնանք, նորան հաղորդելով աւելի կենդանի հաւատ, աւելի լոյս — յոյս, աւելի ամուր և յարատև սէր: Դառնանք նորա մօտ և թող իմանայ այս աշխարհը, լսելով մեր խօսքը, տեսնելով մեր գործերն, որ մենք եղիայի նման բարձրացել ենք սուրբ լերան գլուխն և այնտեղ լրսել ենք Աստուծոյ ձայնը:

(Իերախէ).

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՍՏՐԿՈՒԹԵԱՆ ՎԻՃԱԿԸ ՀԻՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ

ԵՒ

ՔՐԻՍՏՈՆԻՈՒԹԵԱՆ ԱԶԻԵՑՈՒԹԻՒՆԸ ՆՈՐԱ ՎԵՐԱՅ.

(Շարս-Նախ-Ին-Ն)

Ստրկութեան ծագումն ընդհանրապէս մարդկային սեռի մէջ և մասնաւորապէս նորա սկիզբն հին Եւրոպական հասարակապետութեանց մէջ:

Բովանդակութիւն. Ստրկութեան ծագման դժուար խնդիրը լուծելու համար պէտք է դիմել նախնական ազգերի բարուց և սովորութեանց:—

Քաղաքակրթութեան ստոր աստիճանի վերայ դտանվող վայրենի ազգերն աւելի լաւ են համարում սպանել իրանց յաղթուած թշնամիներին. քաղաքակրթութեան զարգացման հետ նոքա օգուտ քաղել են աշխատում իրանց գերիներէց, սրանց ստրկացնելով: Յունաստանում ստրկութիւնը ծագեցաւ նրանից, որ յաղթող եկաւորները ստրկացրին Եւրոպայի նուաճուած բնիկներին: